

Մարտիրոս

Վարչական ղեկավար՝ Մովսես Մանուկյան

Հեռ. +374 98066632

Բնակչության թիվը՝ 610

Մարտիրոսը մեկն է Վայոց ձորի, ինչպես նաև ողջ Հայաստանի այն սակավաթիվ գյուղերից, որի հիմնադրման ստույգ տարեթիվը և հիմնադրողների անունները պահպանվել են: Այդ կարևոր տեղեկությունը արձանագրված է գյուղամիջի մեծ աղբյուրի մոտ 1283թ. վարդագույն գրանիտից կանգնեցված երեք մետրից ավելի բարձրություն ունեցող գեղաքանդակ խաչքարի վրա՝ ներքևում հետևյալ արձանագրությամբ.

<<Ես՝ Դեղիկի որդի Մխիթարս, Իշխանաց իշխան Պոռշի և նրա որդի Հասանի հրամանով, 1283թ. շինեցի Մարտիրոս գյուղը և կանգնեցրի այս խաչքարը սուրբ վկայարանի (եկեղեցու) դռան առջև, ի բարեխոսություն և իմ ամուսին Մամջրին և իմ որդի Ղարիբ Շահին և իմ դուստր Ռուզաքանին, ովքեր որ ընթերցեք, հիշեցեք մեզ: Շինվեց Շնորհավորի ձեռքով>>:

Փաստերը վկայում են, որ Մարտիրոսը Պոռշ իշխանի հրամանով կառուցվել է ոչ թե ամայի վայրում, այլ վերակառուցվել է մի գյուղ, որը ունեցել է իր բնակիչները: Մարտիրոսը, իր ավելի քան 700 տարվա պամության ընթացքում, թողել է բազմաթիվ պատմական ու մշակութային արժեքներ:

Մարտիրոսի ամենանշանավոր ճարտարապետական հնությունը 13-րդ դարի վիմափոր Սուրբ Աստվածածին վանքն է, որը գտնվում է գյուղից 2,5 կմ հարավ-արևելք, Նգար սարի ստորին հատվածում, որտեղից սկիզբ են առնում սառնորակ աղբյուրները: Վանքն ամբողջությամբ կերտված է Նգար սարի ներսում, ստորգետնյա լեռան մեջ: Ըստ պահպանված արձանագրությունների, վանքը 1286 թվականին կառուցել է Մարտիրոս Վարդապետը, իսկ ճարտարապետն է եղել քարագործ Գրիգորիկը:

Վիմափոր եկեղեցին Գեղարդից հետո ամենանշանավոր և խոշոր ժայռափոր ճարտարապետական համալիրն է Հայաստանում, իսկ ներքին հնչեղությամբ այն առաջինն է հայ եկեղեցական շինարարության մեջ՝ իր կառուցողական բարձր արվեստով:

Սահմանակից բնակավայրերն են՝ հյուսիս-արևելքից՝ Զառիթափը, հարավ-արևմուտքից՝ Սերսը, Խնձորուտը, հարավ-արևելքից սահմանակից է Նախիջևանի հանրապետությանը: Հեռավորությունը մարզկենտրոնից 33կմ, Վայք քաղաքից 20կմ, մայրաքաղաքից՝ 155կմ:

Գյուղի տարածքը բաժանված է երկու ենթագոտիների՝ չոր լեռնատափաստանային և բարձր լեռնատափաստանային:

Կլիման մեղմ է, զով ամառներով և ցուրտ ձմեռներով: Համայնքի տարածքը կտրտված է բազմաթիվ ձորերի և ձորակների խիտ ցանցով: Միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է՝ ամենաբարձրը՝ +37°C, ամենացածրը՝ -31°C, տեղումների տարեկան քանակը՝ 556մմ, ձյունածածկ օրերի թիվը՝ 124 օր:

Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ: Համայնքն ունի մշակույթի տուն, գրադարան, փոստի բաժանմունք, բուժկետ, դպրոց և կապի բաժանմունք: